ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

թիվ 3

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար ավտոմոբիլային վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-26/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի.

ք. Գավառ 6 փետրվարի 2026թ.

Սույն թվականի փետրվարի 6-ին ժամը 11.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար ավտոմոբիլային վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-26/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հանձնաժողովի հերթական նիստ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ Լ"Գ" Սիրունյանը, հանձնաժողովի անդամներ Ս. Պ. Կարապետյանը և Գ. Ն. Աբրահամյանը:

Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց 1-ին և 2-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչված «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի նախագծի հաստատումն, ինչպես նաև որակավորման ու պայամանագրի ապահովումները ներկայացնելու մասին:

Հանձնաժողովը գնահատման թերթիկների հիման վրա գնահատեց, որ պայմանագրի նախագծի հաստատումը, ինչպես նաև որակավորման ու պայամանագրի ապահովումները կազմվել և ներկայացվել են սահմանված կարգով և ժամկետներում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

1-ին և 2-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի միջև 2026 թվականի փետրվարի 6-ին կնքել ավտոմոբիլային վառելիքի ձեռքբերման «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-26/04-1» ծածկագրով գնման պայմանագիր, որի ընդհանուր գինը կազմում է 2.274.000 (երկու միլիոն երկու հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ:

Որոշումն ընդունվել է կողմ՝ 3 և դեմ՝ 0:

Հանձանաժողովի նախագահ՝ Լ. Գ. Սիրունյան

հանձանաժողովի անդամ՝ Ս. Պ Կարապետյան

հանձանաժողովի անդամ՝ Գ. Ն. Աբրահամյան

հանձանաժողովի քարտուղար՝ Ս. Բ. Ղարաբաղցյան